



*Համարը* N 810-Ն  
*Տիպը* Որոշում  
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2012.07.11/33(907)  
Հոդ. 841

*Տեսակը* Ինկորպորացիա  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան

*Ընդունող մարմինը* ՀՀ կառավարություն  
*Ստորագրող մարմինը* ՀՀ վարչապետ  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 01.01.2014

*Ընդունման ամսաթիվը* 28.06.2012  
*Ստորագրման ամսաթիվը* 03.07.2012  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԲԱՎԱՐԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻՆ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2012 թվականի N 810-Ն

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԲԱՎԱՐԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻՆ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(վերնագիրը խմբ. 13.09.13 N 991-Ն, 10.07.14 N 788-Ն)*

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

*(նախարարը լրաց., փոփ. 13.09.13 N 991-Ն, փոփ. 10.07.14 N 788-Ն)*

1. Հաստատել

1) մասնակիցների ռեեստրը վարողի կողմից կուտակային բաղադրիչի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանն ու երաշխիքային ֆոնդին հատուցման դեպքի առկայության փաստի մասին տեղեկացնելու կարգը, ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և երաշխիքային ֆոնդի միջև տեղեկատվության փոխանակման կարգը՝ համաձայն N 1

հավելվածի.

2) երաշխիքային ֆոնդի կողմից հատուցվող գումարը մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից երաշխիքային ֆոնդում բավարար միջոցներ չլինելու դեպքում երաշխիքային ֆոնդին գումար փոխանցելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

*(1-ին կետը խմբ. 13.09.13 N 991-Ն, փոփ., խմբ. 10.07.14 N 788-Ն)*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**S. Սարգսյան**

2012 թ. հուլիսի 3  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2012 թվականի  
հունիսի 28-ի N 810-Ն որոշման

**ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ  
ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔԻ ԱՌԿԱՑՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ  
ԿԱՐԳԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԻՋԵՎ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ  
*(վերնագիրը խմբ. 13.09.13 N 991-Ն, փոփ. 10.07.14 N 788-Ն)***

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կուտակային կենսաթոշակային համակարգի բաղադրիչի շրջանակում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանն ու երաշխիքային ֆոնդին հատուցման դեպքի առկայության փաստի մասին տեղեկացնելու կարգի և ներկայացվող փաստաթղթերի ու տեղեկությունների հետ կապված հարաբերությունները:

*(1-ին կետը փոփ. 10.07.14 N 788-Ն)*

2. Եթե սույն կարգով նախատեսված որևէ փաստաթուղթ ուղարկելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա դա ներկայացվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

3. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները համապատասխանում են «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) նախատեսված սահմանումներին:

**II. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
*(վերնագիրը խմբ. 13.09.13 N 991-Ն)***

4. Մասնակիցների ռեեստրը վարողն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և երաշխիքային ֆոնդ է ներկայացնում օրենքով սահմանված հատուցման դեպքի առկայության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն N 1 ձևի: Տեղեկանքը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ՍԻ-ԲԻ-ԷՅ-ՆԵՅ համակարգի (այսուհետ՝ ՍԻ-ԲԻ-ԷՅ-ՆԵՅ համակարգ) միջոցով, էքսել ֆորմատով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից նախօրոք մասնակիցների ռեեստրը վարողին տրված հասցեով, իսկ անհնարինության դեպքում՝ թղթային տարբերակով կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն էլեկտրոնային կրիչով առձեռն մուտքագրվելու միջոցով: Տեղեկանքը երաշխիքային ֆոնդ ներկայացվում է ՍԻ-ԲԻ-ԷՅ-ՆԵՅ համակարգի միջոցով, էքսել ֆորմատով՝ երաշխիքային ֆոնդի կառավարչի կողմից նախօրոք մասնակիցների ռեեստրը վարողին տրված հասցեով, իսկ անհնարինության դեպքում՝ երաշխիքային ֆոնդ էլեկտրոնային կրիչով առձեռն մուտքագրվելու միջոցով:

*(4-րդ կետը խմբ. 13.09.13 N 991-Ն, փոփ. 10.07.14 N 788-Ն)*

**III. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**  
*(վերնագիրը խմբ. 13.09.13 N 991-Ն)*

5. Օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հատուցման ժամանակ, երաշխիքային ֆոնդում բավարար միջոցներ չլինելու դեպքում, երաշխիքային ֆոնդը հատուցման դեպքի առկայության և բավարար միջոցներ չունենալու փաստը հաստատված համարելու դեպքում օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում վճարման հայտ և կից վճարման հանձնարարագիր՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հրամանով հաստատված ձևի, ՍԻ-ԲԻ-ԷՅ-նեթ համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից նախօրոք երաշխիքային ֆոնդի կառավարչին տրված հասցեով, իսկ անհնարինության դեպքում՝ թղթային տարբերակով կամ էլեկտրոնային կրիչով առձեռն մուտքագրվելու միջոցով:  
*(5-րդ կետը խմբ. 13.09.13 N 991-Ն, 10.07.14 N 788-Ն)*

**IV. ՄԱՍՆԱԿՑԻ ԿԱՏԱՐԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ԳՈՒՄԱՐԻ՝ ԳՆԱՃՈՎ ՃՇԳՐՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**  
*(բաժինն ուժը կորցրել է 10.07.14 N 788-Ն)*

- 6. *(կետն ուժը կորցրել է 10.07.14 N 788-Ն)*
- 7. *(կետն ուժը կորցրել է 10.07.14 N 788-Ն)*
- 8. *(կետն ուժը կորցրել է 10.07.14 N 788-Ն)*

**V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ**  
*(բաժինն ուժը կորցրել է 10.07.14 N 788-Ն)*

- 9. *(կետն ուժը կորցրել է 10.07.14 N 788-Ն)*

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան

Ձև N 1

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1. Հղման համարը՝ .....	3. Հատուցվող գումարը՝ երաշխիքային ֆոնդի հաշվին	4. Սպասարկող բանկի անվանումը
2. <i>(կետն ուժը կորցրել է 10.07.14 N 788-Ն)</i>		
5. Հաշվեհամարը		6. Հաշվետիրոջ անվանումը
7. Վճարման ամսաթիվը՝ _____ 20 թ.		

*(աղյուսակը փոփ. 13.09.13 N 991-Ն, 10.07.14 N 788-Ն)*

**Տեղեկանքի լրացման ուղեցույցը**

- 1. «1. Հղման համարը» վանդակում լրացվում է մասնակիցների ռեեստրը վարողի տեղեկատվական համակարգի

կողմից հատուցման դեպքի առնչությամբ զեներացված եզակի հղման համարը:

2. (կետն ուժը կորցրել է 10.07.14 N 788-Ն)

3. «3. Հատուցվող գումարը՝ երաշխիքային ֆոնդի հաշվին» վանդակում լրացվում է մասնակցի համար օրենքի 45-րդ հոդվածով սահմանված տարբերության գումարի՝ երաշխիքային ֆոնդի հաշվին փոխհատուցվող մասը՝ համաձայն օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասի:

(3-րդ կետը խմբ. 10.07.14 N 788-Ն)

4. «4. Սպասարկող բանկի անվանումը» վանդակում լրացվում է մասնակիցների ռեեստրը վարողին սպասարկող այն բանկի անվանումը, որտեղ գտնվող հաշվում պետք է վճարվի հատուցվող գումարը:

5. «5. Հաշվեհամարը» վանդակում լրացվում է մասնակիցների ռեեստրը վարողին սպասարկող բանկում գտնվող հաշվի համարը:

6. «6. Հաշվետիրոջ անվանումը» վանդակում լրացվում է մասնակիցների ռեեստրը վարողի լրվի ֆիրմային անվանումը:

7. «7. Վճարման ամսաթիվը» վանդակում լրացվում է հատուցվող գումարը վճարելու ամսաթիվը:

(ձևը փոփ. 13.09.13 N 991-Ն, փոփ., խմբ. 10.07.14 N 788-Ն)

Ձև N 2

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

61 ԵՎ ԱՎԵԼԻ ՏԱՐԵԿԱՆԸ ԼՐԱՅՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ (ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՐԴԵՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ԿԱՍ ՍՏԱՑԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ԱՅՆ ՄԱՀԱՑԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՎԱՐԵԼ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ ՓԱՅԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒՄԸ ԿԱՍ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ԱՅՆ ԱՆՁԱՆՑ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՍՏԱՅԵԼ ԵՆ ՆԱԽՔԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՏԱՐԻՔԸ ԼՐԱՆԱԼԸ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՈՐՈՆՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ (ՖՈՆԴԵՐԻ) ՓԱՅԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԵՏՈՒ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՓՈՔՐ Է ՏՎՅԱԼ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԱՏԱՐԱԾ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ԳՈՒՄԱՐԻ (ՃՇԳՐՏՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ԳՆԱՃՈՎ) 120%-ԻՑ

(տեղեկանքն ուժը կորցրել է 10.07.14 N 788-Ն)

**Տեղեկանքի լրացման ուղեցույցը**  
(ուղեցույցն ուժը կորցրել է 10.07.14 N 788-Ն)

(ձևը լրաց. 13.09.13 N 991-Ն, փոփ. 10.07.14 N 788-Ն)  
(հավելվածը խմբ., փոփ., լրաց. 13.09.13 N 991-Ն, փոփ., խմբ. 10.07.14 N 788-Ն)

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2012 թվականի  
հունիսի 28-ի N 810-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻՆ ՓՈՒԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԲԱՎԱՐԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՈՒՄ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻՆ ԳՈՒՄԱՐ ՓՈՒԱՆՑԵԼՈՒ

(վերնագիրը խմբ. 13.09.13 N 991-Ն, 10.07.14 N 788-Ն)

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են երաշխիքային ֆոնդի կողմից Հայաստանի Հանրապետության կուտակային կենսաթոշակային համակարգի բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողին՝ մասնակցի կատարած սոցիալական վճարների ամբողջ գումարի՝ ճշգրտված տարեկան գնաճով, և նրա կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի հաշվարկային արժեքների հանրագումարի տարբերության չափով երաշխիքային ֆոնդի կողմից հատուցվող գումարը մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները համապատասխանում են «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) նախատեսված սահմանումներին:

**II. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻՆ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ**

3. Երաշխիքային ֆոնդի հաշվին հատուցվող գումարը վճարվում է օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում մասնակիցների ռեեստրը վարողի հաշվին՝ Բանկ-մեյլ համակարգով՝ նշելով մասնակիցների ռեեստրը վարողի տեղեկատվական համակարգի կողմից յուրաքանչյուր հատուցման դեպքի առնչությամբ գեներացված եզակի հղման համարը:

**III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԲԱՎԱՐԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻՆ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ**

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը երաշխիքային ֆոնդից Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 28-ի N 810-Ն որոշման N 1 հավելվածի III բաժնով սահմանված վճարման հայտն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հատուցման ենթակա գումարի ն երաշխիքային ֆոնդում առկա միջոցների տարբերության չափով վճարում է երաշխիքային ֆոնդի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացված դրամական հաշվին՝ Բանկ-մեյլ համակարգով:

*(հավելվածը խմբ. 13.09.13 N 991-Ն, փոփ., խմբ. 10.07.14 N 788-Ն)*

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**